Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 411 - Ա
որոշման

«ՄԱՏՉԵԼԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքում հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի խաղահրապարակի կառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Առաքելություն Արևելք» միջազգային մարդասիրական և զարգացման կազմակերպություն (Լուկասեյ 13, Հելերուփ, Դանիա: CVR 1472 3692)
4.	Ծրագրի կատարողը	«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն (ՀՎՀՀ՝ 01212788, Երևան, Կորյունի 19-ա, շենք 7)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, Իջևան, Բլբուլյան 4-րդ նրբ. / 4: Սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	2,877,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Իջևանի մասնաճյուղի «Երեխաների զարգացման և սոցիալական ներառման» կենտրոնի 190 հաշմանդամություն ունեցող երեխաներ:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Խաղահրապարակի խաղասարքերի ձեռքբերում և տեղադրում՝ 2,877,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խաղահրապարակի խաղասարքերի ձեռքբերման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,877,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ